

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ներքին Հանդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու նպատակով մրցույթ անցկացնելու մասին

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանդի համայնքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ներքին Հանդ համայնքի /այսուհետ՝
Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզի Ներքին Հանդի համայնքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝
Աշխատակազմ/ համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու
համար.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ներքին Հանդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)

Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է
Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը, ապահովում է Աշխատակազմի
գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը. Համայնքի
ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա
ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը, համայնքային
ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի
կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը: Օրենսդրությամբ
սահմանված կարգով վարում է Համայնքի զինապարտների գրանցամատյանը,
սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու
վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին, իրականացնում է
պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար
պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝
պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն
հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ
դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա
հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար
ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության
դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ
հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա
աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու
անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ
գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային
ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ
համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի
առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ (այս պահանջը գործելու է մինչև 2018

թվականի հունվարի 1-ը), Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի «Նախագորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման կարգը հաստատելու մասին» N282 որոշման, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2016 թվականի մարտի 14-ին, ժամը 14.00-ին՝ Աշխատակազմի զբաղեցրած շենքում (գյուղ Ներքին Հանդ):

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը՝ հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին, արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք, մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի, անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2016 թվականի փետրվարի 24-ը, մինչև ժամը 18.00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Ներքին Հանդ, հեռ.՝ 077-864280 կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (հասցե՝ ՀՀ ք.Կապան, Գ.Նժդեհի 1. Հեռ.՝ 0285-23550):